

ՆՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՆԱԽԻՉԵՎԱՆԻ ՍԵՊԱԳՐՈՒՄ

ՆԻԿՈԼԱՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նվաճողական բնույթի այս ժայռագիր արձանագրությունը զգալի հետաքրքրություն է ներկայացնում հինարևելյան Ուրարտական պետությունների վաղ շրջանի ռազմաքաղաքական պատմության համար: Այն, ցավոք, ունի մի շարք տուժած հատվածներ, որոնք, բնականաբար, խոչընդոտում են տեքստի համակողմանի հետադոտությունը: Դրանց ավելանում են հրատարակիչների թույլ տված ոչ քիչ վրիպումները՝ արձանագրության ընթերցումներում, թարգմանություններում և մեկնաբանություններում¹: Այս վերջին հանգամանքը, բնականաբար, հրամայական պահանջ է դնում կրկին անգրադաոնալու Նախիջևանի չափազանց արժեքավոր նորահայտ սեպագրին:

Մեր նկատառումները, կարծում ենք, արժե սկսել արձանագրության ընթերցումներից, որոնց վրա էլ, ինքնին հասկանալի է, խարսխված կլինեն առաջարկվող նոր մեկնաբանությունները: Նկատենք, որ տեքստի 1-ին տողում հայերեն հոդվածի հեղինակները ընթերցում են². ^aHal-di-ni-n[i] us-ma-[š]i-ni ^mIs-ru-ù-i-ni-se ^{md.XV}Sar-dur-š-hi-[ni-se KA(?)]: Այստեղ նախ ծայր աստիճանի տարօրինակ է իշպուհինի հոր՝ Սարդուրի 1-ի անվանը հղված ^{md.XV} գետերմինատիվը և զրան հաջորդող ^{md.XV}Sar վանկագիր նշանը: Իհարկե, արդարացի է ^dXV-ի ընկալումը որպես «Իշտար»³ և «Սարգուբի» անվան ընթերցումը նաև որպես «Իշտարգուբի»: Այդ մասին ասված է նրանց բացատրագրում: Սակայն նույն տեղում, չգիտես ինչու, ավելացվում է ^{md.XV}Sar սեպագիր նշանը և այդ կարծեցյալ ^{md.XV}Sar-ը նույնացվում ուրարտական այլ արձանագրություններում հաճախ հանդիպող ^{md}Sar-ի հետ:

1 Վ. Ա. Ի գ ու մ ն ո վ, Հ. Հ. Կ ա ռ ա գ յ ո գ յ ա ն, Ս. Գ. Հ մ ա յ ա կ յ ա ն. Օձասարի սեպագիր արձանագրությունը. - «Պատմա-բանասիրական հանդես», 1997, N 1, էջ 193-202: S. G. H m a y a k y a n, V. A. I g u m n o v, H. H. K a r a g o z y a n. An Urartian Cuneiform Inscription from Ojasar-Ilandag, Nakhičevan - Studi Micenei ed Egeo-Anatolici (այսուհետև՝ SMEA), XXXVIII, Roma, 1996, p. 139-151. M i r j o S a l v i n i. Eine urartaische Felsinschrift in der Region Nachicevan. - Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archaologie (այսուհետև՝ ZA). Bd. 88. Berlin, New York, 1998, S. 94-99.

2 Ստորև, բնականաբար, ամենուրեք հղում ենք Վ. Ա. Իգումնովի, Հ. Հ. Կարագյոզյանի և Ս. Գ. Հմայակյանի հայերեն լույս ընծայված հոդվածը, որին համապատասխանում է նրա ավելի վաղ Հոոմում հրատարակված անգլերեն թարգմանությունը:

3 R. B o r g e r. Assyrisch-babylonische Zeichenliste (այսուհետև՝ ABZ), Neukirchen-Vluyn, 1978, նշան N 470:

Նախիջևանի արձանագրությունների հայերեն հրատարակիչները կատարյալ թյուրիմացություն մեջ են, երբ կարծում են, թե իբր ^{ma} Sar-ը հավասարագոր է ^{ma} Sar-ին: Տարօրինակ է, որ այստեղ ^{ma} XV-ը, այսինքն՝ «Իշտար» դիցանունը անձնանվան *m*-ի հետ միասին նրանց կողմից գիտարկվում է որպես «Սարգուրի» անվան գետերմինատիվ: Հետաքրքիր է, այդ ինչ հրաշքով մի դիցանուն կարող է ծառայել որպես գետերմինատիվ որևէ անձնանվան համար: Կասկածից վեր է, որ ուրարտական այլ արձանագրությունների ^{ma} Sar-ին համապատասխանում է Նախիջևանի նոր արձանագրության սոսկ ^{ma} XV-ը, այսինքն՝ Իշտարը: Հետևաբար, այստեղ Իշտարը փաստորեն հանդիսանում է Սարգուրի անվան սկիզբը: Մի խոսքով, Սարգուրին տվյալ դեպքում ընկալվում է որպես Իշտարգուրի: Սակայն սա, իհարկե, հարցի ընդամենը մի կողմն է:

Այդ դեպքում, ինքնին հարց է ծագում, թե ո՞ր մնաց հրատարակիչների առաջարկած Sar-ը: Կարելի է ըստ ամենայնի պնդել, որ այդպիսի նշան Նախիջևանի նոր սեպագրում իսպառ բացակայում է: Ի դեպ, հրատարակիչներին հետաքրքրող Sar նշանը ուրարտական վիմագրության մեջ հանդիպում է սոսկ մի անգամ՝ Սարգուրի II-ի Սևանա լճի արևմտյան ափին դտնված Ասամխանի արձանագրության մեջ⁵: Դա էլ պատահական չէ. այդ բացառությունը ունի իր բացատրությունը: Ակներև է, որ Ատամխանի արձանագրության 2-րդ տողում «Սարգուրի» անվան sar և նրա հոր «Արգիշտի» անվան *ar* «կարճ» նշանների գործածությունը (սովորական ^a Sar-ի և ar-ի փոխարեն) պայմանավորված է տեղի տնտեսամբ՝ այդ անձնանունների տվյալ տողում տեղավորման համար (սեպագիրը տողադարձ չի հանդուրժում):

Այս ամենից հետո կրկին անհասկանալի է մնում, թե ինչո՞վ է պայմանավորված Sar ավելորդ նշանի առկայությունը իբր «Սարգուրի» անվան համար Նախիջևանի հրատարակված նոր արձանագրության գիտական տառադարձման մեջ, մանավանդ որ այն բացակայում է արձանագրության և՛ լուսանկարում, և՛ հրատարակիչների կաղմած ավտոգրաֆիայում: Մեղ թվում է, որ sar և dur₈ (duri) սեպագիր նշանների ինչ-որ չափով նմանությունը⁶ առիթ է ծառայել, որպեսզի dur₈-ը արձանագրության դիտական տառադարձման մեջ հրատարակիչները ընթերցողին թյուրիմացաբար մատուցեն կրկնակի՝ նախ որպես sar, իսկ հետո՝ նաև dur₈: Կարծում ենք, որ այդ թյուրիմացությունը հազիվ թե այլ բացատրություն ունենա:

Այժմ երկու խոսք արձանագրության 1-ին տողի վերջում դարձյալ հայերեն հոդվածի հեղինակների կողմից ենթադրաբար վերականգնված KA(?) գաղափարագրի և նրա «ասում է (?)» թարգմանության մասին: Ինչպես հայտնի է, ուրարտական արձանագրություններում «ասում է»

4 W. von Soden - W. Röllig. Das Akkadische Syllabar. Roma, 1967, N 62 և N 114 նշաններ. ABZ. N 103 նշան:

5 Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН). М., 1960, N 160. F. W. König. Handbuch der chaldischen Inschriften (այսուհետև՝ Hchl). I - II, Graz, 1955 - 1957, N 106.

6 Համեմատի՛ր ABZ, № «152» (ըստ N 331-ի) և N 1528 սեպագիր նշանները:

բայը բացառապես արտահայտվում է *ali(e)* ձևով: Հրատարակիչները, ըստ երևույթին, կարծել են, թե տեքստի տվյալ հատվածում հնարավոր չէ տեղավորել այդ բայի *a-li* կամ *a-li-e* վանկերը, ուստի նպատակահարմար են գտել նրա փոխարեն վերականգնել *KA* գաղափարագիրը, որը և թարգմանել են «ասում է»: Երևի այստեղ նրանք նկատի են ունեցել Սարգուրի I-ի ասորեստանյան լեզվով կազմած արձանագրությունների *KA.KA-ar*-ի (ասորեստ. *izakar^{ar}* <*zakaru* «ասել»)՝ իբր կրճատ ձևը: Սակայն նախ *KA* գաղափարագիրը (ասորեստ. *aw/matu*-ն) առանձին վերցված ոչ թե բայ է, այլ դոյական՝ «խոսք» նշանակությունը⁷: Այնուհետև, որ շատ ավելի կարևոր է, Նախիջևանի նոր արձանագրության ուշագիր ուսումնասիրությունը վկայում է, որ այստեղ «ասել» բայի կարիք ընդհանրապես չի զգացվում:

Սակայն, այնուամենայնիվ, հարց է ծագում, թե ինչո՞վ է սլավոնականացված այդ թյուրիմացությունը: Կարծում ենք, որ այդ հարցին հստակ պատասխան կարող է տալ մի այլ թյուրիմացություն, որի հեղինակը, ինչպես քիչ հետո կհամոզվենք, արգեն ոչ թե Հրատարակիչներն են, այլ ուրարտացի գրագիրը: Նախագասություն ենթական՝ Իչպուհինին և Մենուան, ինչպես տեսնում ենք, այստեղ արտահայտված է հոգնակի թվով, այն դեպքում, երբ բոլոր ստորոգյալները՝ *nauni*-ն («նվաճեց» քաղաք-պետությունները), *zasgumi*-ն («ավերեց», տառացիորեն «ոչնչացրեց» գրանք) և *teruni*-ն («տեղակայեց» արձանագրությունը) ամենուրեք բերված են եզակի թվով: Հենց գրանից էլ ելնելով, հրատարակիչները կարծել են, թե տվյալ դեպքում գործող անձը, այսինքն՝ ռազմական արշավանք ձեռնարկողը և նվաճումներ իրագործողը իբր սոսկ Մենուան է, իսկ նրա հայր Իչպուհինին երևի պարզապես պատմում է որդու սխրագործությունների մասին: Ահա թե ինչու իզուր պահանջ է զգացվել «ասել» բայի, որպեսզի Իչպուհինին հանդես գա ասողի կամ պատմողի դերում, իսկ Մենուան՝ կատարողի: Սակայն քիչ հետո կտեսնենք, որ խոսքը, անկասկած, Իչպուհինիի և Մենուայի համատեղ ռազմական արշավանքի մասին է:

Այժմ անգրագրառնանք Նախիջևանի արձանագրության մեջ տեղ գտած ենթականի և ստորոգյալների թվով անհամապատասխանության խնդրին, այլ կերպ ասած, ուրարտերեն լեզվի քերականական կանոնների խախտումներին: Այդ թյուրիմացությունը, ինչպես վերևում հպանցիկ ակնարկվեց, պարզապես արգասիք է ուրարտական գրագրի անփութության, ըստ որում Նախիջևանի նոր արձանագրության այս արտառոց փաստը ամենևին էլ բացառիկ երևույթ չէ Իչպուհինիի և Մենուայի համատեղ արձանագրությունների համար ընդհանրապես: Դրանում համոզվելու համար ստորև բերենք նույն կարգի մի քանի ականառու փաստեր.

Օրինակ, Իչպուհինիի և Մենուայի Աշոտակերտի արձանագրության մեջ ասված է. ^dHaldie eurie ^mIspuinise ^{md}Sarduriehinise ^mMenuase

7 YKH, 1, տող 5. 2, տող 7. F. W. K o n i g. HchI, 1a-c. KA.KA-ar-ը ունի նաև DU11.DU11-ub=ասորեստ. *dababu* ընթերցումը միևնույն «ասել» իմաստով:

8 ABZ, սեպագիր նշան N 15. W. v o n S o d e n. Akkadische Handwörterbuch, I, Wiesbaden, 1965, S. 89.

“Ispuinihinise ⁹Haldiei susi sidistuni... teruni ardise⁹ «Խալդի աստծուն՝ տիրոջը, իշպուհինին, Սարգուրիի որդին, (և) Մենուան, Իշպուհինիի որդին, Խալդիի տաճար կառուցեց (փոխանակ sidistitu կամ sidisitu «կառուցեցին»), «սահմանեց» (փոխանակ՝ te(i)rtu «սահմանեցին») հրաման»: Ճիշտ նույնպիսին է իրերի վիճակը ուրարտական այդ թագավորների «Մհերի դոտն» պաշտամունքային արձանագրության մեջ, ուր առաջին տեքստում կարգում ենք. ... “Ispuinise ¹⁰Sarduriehinise ¹¹Menuase ¹²Ispuinihinise inili KA zaduali teruni ardise, ¹³իսկ զուգահեռ երկրորդ տեքստում ... “Ispuinise ¹⁴Sarduriehinise ¹⁵Menuase ¹⁶Ispuinihinise inili KA ¹⁷ME⁵ zatuli teirtu ardise¹⁰:

Ինչպես ականառու երևում է բերված նույնական տեքստերից, ենթակայի հոգնակիության (Իշպուհինիի և Մենուայի) պայմաններում ստորոգյալները մի դեպքում սխալմամբ արտահայտված են անցյալ կատարյալ ժամանակի եզակի 3-րդ դեմքով (zaduali¹¹, teruni), իսկ մյուս դեպքում ճշգրիտ՝ նույն ժամանակի հոգնակի 3-րդ դեմքով (zatuli¹, teirtu): Այդպիսի մի նահանջ էլ ուրարտերենի քերականական կանոններից, դարձյալ դրագրի մեղքով, նշմարվում է Իշպուհինիի և Մենուայի մի այլ համատեղ արձանագրության մեջ, որը ծագում է Բագնոցից¹²:

Վերոհիշյալ բավական լավ պահպանված սեպագիր տեքստերի հրատարակիչներից, ընականարար, ոչ ոքի մտքից չի անցել, որ այստեղ ինչ-որ «ասել» բայի կարիք է զգացվում կամ ուղղակի արչավանք ձևանարկողը իբր միայն Մենուան է, որի մասին սոսկ պատմում է Իշպուհինին: Ի դեպ, այս ամենին ավելացնենք նաև, որ Նախիջևանի նոր արձանագրության մեջ ևս, Իշպուհինիի և Մենուայի այդ կարգի այլ համատեղ արձանագրությունների նման, առանց «ասել» բայի էլ, ամեն ինչ իր տեղում է: Այստեղ պարզապես ասված է, որ Խալդի աստծո հղորդությամբ Իշպուհինին և Մենուան նվաճել են մի շարք քաղաք-պետություններ, որոնք, ինչպես մի փոքր հետո կտեսնենք, եղել են Պուլուազի լայնատարած երկրի բաղկացուցիչ մասերը:

Ընթերցողին թյուրիմացությունից հեռու պահելու համար այստեղ ընդգծենք, որ վերոհիշյալ բոլոր գիտողությունները վերարբերում են սոսկ Հայերեն հոգնակի հեղինակներին: Այդ տեսակետից դերմաներեն լեզվով հոգնակի, ընդհանուր առմամբ, բավական հաճելի տպավորություն է թողնում: Ճիշտ է, առանց մանրակրկիտ փաստարկների, ինչպես գա երևում է մեր եզրահանգումներում, սակայն Մ. Սալվինիի մոտ ևս հստակ երևում է, որ Նախիջևանի ուրարտական արձանագրությունը կազմված է երկու թագավորների անունից, որ «ասել» բայի կարիք այնտեղ ամենևին չի նշմարվում, քանի որ առանց դրան էլ արձանագրությունը սահուն ընթերցվում

9 YKH, 25, տողեր 1-3: F. W. K o n i g. HchI, 8, նույն տողերը:

10 YKH, 27, տողեր 1-2, 32-34=HchI, 10, նույն տողերը:

11 Բայական այս ձևերում արտահայտված է նաև օբյեկտային -ի հոգնակի ցուցիչը, որը վերաբերում է կառուցված «Խալդի աստծո դռներին», այսինքն՝ տաճարին:

12 M. S a l v i n i. Una dedica di Ispuini e Minua al dio Ua. — SMEA, XXXI, Roma, 1993, p. 143-148.

է, որ եզակի թվով ստորոգյալների (բայերի) առկայությունը՝ հոգնակի թվով ենթակայի (Իչպուլինիի և Մենուայի) դեպքում պարզապես ուրարտեանի քերականական կանոնների խախտումներ են գրագրի կողմից և հանդիպում են Իչպուլինիի և Մենուայի նաև այլ համատեղ արձանագրություններում, որ ^aXV-ը այնտեղ հավասարազոր է այլ արձանագրություններին ^aSar-ին և փաստորեն ուրարտական թագավորի անվան սկիզբն է, ուստի անհնարին է այն կամայականորեն դիտարկել որպես գետեմինատիվ «Սարգուրի» անվան համար, այդ սլաժառուկ էլ արձանագրության գիտական տառադարձման մեջ ստիպված մատուցել ևս մի ավելորդ sar վանկագիր նշան, որը սեպագիր տեքստում չկա և որի կարիքը ամենևին չի էլ զգացվում¹³:

Ինչպես նկատելի է, Նախիջևանի սեպագրի ընթերցումներին ու մեկնաբանություններին վերաբերող մեր դիտողությունները կամ ճշգրտումները առայժմ առնչվում էին հայերեն հոգվածի հեղինակների սայթաքումների հետ: Սակայն այստեղ արդեն ստիպված ենք անդադրադադար նաև գերմաներեն հոգվածի հեղինակ Միրյո Սալվինիի վրիպումներին: Դրանք վերաբերում են արձանագրության 2-րդ տողի վերջում նրա առաջարկած k[a-ru-ni] և 3-րդ տողի սկզբում ^{urc}Ar-si-ni-e-i ընթերցումներին:

Նախ, երկու խոսք karuni ընթերցման մասին: Անհապաղ ասենք, որ այս բայի ընթերցումը տվյալ տեքստում բացառվում է մի շարք պատճառներով: Միանգամայն ակներև է, որ արձանագրության մեջ հետաքրքրող հատվածում բավական հստակ պահպանվել են ոչ միայն URU «քաղաք» դետեմինատիվը, այլև նրան հաջորդող սեպագիր նշանի հետքերը, որոնց տակ և՛ հայերեն հոգվածի հեղինակները, և՛ մենք հակված ենք տեսնելու is(?): Դա հաստատվում է նաև այն ակնառու փաստով, որ Նախիջևանի արձանագրությունը հիշատակում է նաև երեք այլ քաղաք-պետությունների նվաճման մասին: Ելնելով դրանից, այստեղ մենք հակված ենք հայերեն հոգվածի հրատարակիչների ^{uru}Is(?)-[... առաջարկին ավելացնել նաև [...KUR-ni] ընթերցումը: Սակայն ասվածով հարցը չի սպառվում: Մյուս կողմից, իտալացի ուրարտագետի կարծիքով, իբր այդ karuni-ն վերաբերում է հաջորդ տողի քաղաք-պետությանը: Այլ կերպ ասած, շինծու ասվավորություն է թողնում, թե իբր մի դեպքում Արծինի քաղաքը նվաճվում է (hauri), իսկ մյուս դեպքում նույն Արծինին (այս անգամ արդեն քաղաք-պետությունը) օկուպացվում է (karuni)¹⁴:

Ի դեպ karuni ընթերցումը այստեղ հեշտությամբ մերժվում է նաև այլ նկատառումներով: Նախ, այդ բայը ուրարտական արձանագրություններում, որպես կանոն, ուղեկցում է ինվերսիոն, այսպես կոչված, վերնագրային տեքստերում, երբ գործող անձը, այսինքն՝ արչավանք ձեռնարկողը և երկրներ հպատակեցնողը իբր դերադույն աստված ինվերսիոն է. ^aHaldini

13 ZA, 88, S. 94-96. Ի դեպ, ուրարտական Սարգուրին «Իչտարգուրի» է մատուցվում նաև ասորեստանյան սեպագրում:

14 Նույն անդում, էջ 94-95:

ustabi masinie ^Օ*surie karuni*... «խալդի աստվածը արշավեց, իր զենքին հպատակեցրեց...»: Իսկ իրական արշավանքների նկարագրության մեջ թագավորների նվաճումների առթիվ սովորաբար գործածվում է *ha(u)*- «նվաճել» բայը: Այնուհետև, տարօրինակ է, որ Միրյո Սալվինիի ընթերցման և թարգմանության մեջ միևնույն ([՞]) Արծինին (ի դեպ դրանք տարբեր աշխարհագրական միավորներ են և տարբեր անվամբ) մերթ քաղաքի, մերթ էլ քաղաք-պետության դերում անընդմեջ և՛ նվաճվում է (*hauni*), և՛ հպատակեցվում կամ օկուպացվում (*karuni*):

Ի միջի այլոց, *karuni* ընթերցումը և մեկնարանությունը իրենց չեն արդարացնում նաև այլ տեսակետներից: Նախ, հայտնի է, որ նվաճված երկրների օկուպացումը ուրարտական արձանագրություններում արտահայտվում է ոչ թե *kar(u)*- «հպատակեցնել», այլ *abili-d(u)*- «ավելացնել», «միացնել» բայով: Այսպես է, օրինակ, Սարգուրյան տարեգրության մեջ. ^{KUR}*ebani* (տարբերակ՝ ^{KUR}*ni*) ^{KUR}*ebani-ukiedi abilidadubi* «Երկիրը իմ երկրին միացրի»¹⁵: Ըստ որում ամենուրեք դա հիշատակվում է այս կամ այն կոնկրետ երկրի նվաճման մանրամասները նկարագրելուց հետո: Այնուհետև, այստեղ նվաճված Արծինի քաղաք-պետությունը, ինչպես կտեսնենք ստորև, եղել է Պուլուադի երկրի չորս քաղաք-պետություններից մեկը, ուստի ըստ ամենայնի անհասկանալի է, թե ինչպես նրանցից մեկը կարող էր օկուպացվել, իսկ մյուսները՝ նվաճվել: Հետևաբար, եթե խոսք լիներ օկուպացման մասին, ապա դա պետք է վերաբերվեր Պուլուադի երկրին ընդհանրապես՝ իր բոլոր բաղկացուցիչ մասերով: Է՛լ չենք ասում շարահյուսական կանոնների կամայական դրսևորումների մասին, երբ կողք-կողքի հանդես եկող բայերը մերթ հաջորդում են նվաճված օբյեկտին (^{URU}*Arsinie hauni*), մերթ էլ՝ նախորդում (*karuni* ^{URU}*Arsinie KUR-ni*):

Այժմ անդրադառնանք արձանագրության 2-րդ և 3-րդ տողերում Մ. Սալվինիի առաջարկած ^{URU}*Ar-si-ni-e/a?-ni* և ^{URU}*Ar-si-ni-e-i KUR-ni* ընթերցումներին: Դատելով սեպագիր տեքստի լուսանկարից, նկատելի է, որ այդ տեղանուններից առաջինի ընթերցման խնդրում, ընդհակառակը, իրավացի են հայերեն հոդվածի հեղինակները, երբ առաջարկում են ^{URU}*Ar-s[i-n]i* [*KU*]R-ni: Ի դեպ դա հաստատվում է ոչ միայն տեքստում պահպանված նշանների այդօրինակ ընթերցման հավանականությամբ, այլև հենց արձանագրության բնույթով, նկատի ունենալով, որ տվյալ դեպքում խոսքը ամենուրեք վերաբերում է Պուլուադի լայնատարած երկրի չորս քաղաք-պետությունների նվաճմանը:

Ինչ վերաբերում է 3-րդ տողի ^{URU}*Ar-si-ni-e-i KUR-ni* ընթերցմանը, ապա այդ հարցում ևս, դժբախտաբար, դժվար է համաձայնվել իտալացի ուրարտագետի հետ, քանի որ այդ դեպքում, առաջին հերթին, չինձու տպավորություն է թողնում, թե երկու դեպքում էլ իբր մենք դործ ունենք միևնույն Արծինի տեղանվան հետ, որը նրա կարծիքով, մերթ իբրև քաղաք նվաճվում է, մերթ էլ իբրև քաղաք-պետություն՝ օկուպացվում: Այնպես որ

15 YKH, 155 B, տողեր 24-26. E, տողեր 18 և 24:

այդ հարցում ևս, ընդհանուր առմամբ, իրավացի են հայերեն հոգվածի հեղինակները, երբ այն, ի տարբերություն վերոհիշյալ Արծինի, ⁶⁶ *Ar-si-qu-me(?)*-ի KUR-նի ձևով մատուցում են որպես այլ տեղանուն: Միայն թե *me(?)*-ի փոխարեն մենք առաջարկում ենք *a* ընթերցումը, համոզմունք ունենալով, որ տվյալ գեպը, ամենայն հավանականությամբ, եղծված է այդ ոչ մեծ նշանի սոսկ աջակողմյան վերին կարճ ուղղահայաց սեպը: Ի դեպ, երևի պատահական չէ, որ ⁶⁷ *Ar-siqua*-յի նման *-ua* վերջավորությամբ տեղանուններ ուրարտական արձանագրություններում հանդիպում են նաև մի շարք այլ դեպքերում՝ *Barsua*, *Erikua*, *Irdua*, *Ususua*, *Zua* և այլն:

Իսկ այժմ արձանագրության Զ-րգ տողի *zasguni* բայի թարգմանության մասին: Աչքի է զարնում այն փաստը, որ տվյալ հարցում և՛ հայերեն, և՛ գերմաներեն հոգվածների հեղինակները բավական հեռու են համոզիչ լուծում առաջարկելուց: Եթե առաջինների մոտեցումը, կարելի է ասել, կամայական է, քանի որ նրանք հակված են խմբագրելու արձանագրությունը՝ նրանում գոյություն չունեցող ինչ-որ բառ սողոսկելով թարգմանության մեջ, ապա գերմաներեն հոգվածի հեղինակի մոտեցումը սլարգապես խուսափողական է, որը լուելյայն արտահայտվում է արձանագրության թարգմանության մեջ *zasguni* բայի տեղում կախման կետերի դետեղումով:

Կարծում ենք, որ հայերեն հոգվածի հեղինակները ըստ ամենայնի թյուրիմացության մեջ են, երբ այստեղ, այլ տեքստերի նման, *zasguni*-ն - թարգմանում են «սպանեց», ուստի դրան փակագծում են թաղրաբար ավելացնում են սեպագիր տեքստում բացակա «մարդկանց» բառը: Աչքի է զարնում, որ այս *zasguni*-ն նրանք մեքենայաբար նույնացրել են ուրարտական այլ արձանագրություններում հանդիպող գործածության հետ, երբ խոսքը, իսկապես, մարդկանց սպանության մասին է: Այսպես, եթե, օրինակ, նվաճված երկրներում ձեռք բերած ռազմագերիների թվարկումից հետո ուրարտական արձանագրություններում հիշատակված *aliki zasgubi aliki sehiri* (կամ՝ *TI, TI.LA*) *agubi* նախադասությունը սովորաբար թարգմանվում է «Ոմանց սպանեցի, ոմանց էլ կենդանի տարա», ապա դա դեռևս չի նշանակում, որ *zasg(u)*- բայը բոլոր դեպքերում աներկբա պետք է ընկալել «սպանել» իմաստով: Մի՞թե պարզ չէ, որ Նախիջևանի արձանագրության մեջ խոսքը ոչ թե մարդկանց սպանության մասին է, այլ նվաճված (*hauni*) քաղաք-պետություններում ուրարտացիների այլ ձեռնարկումների մասին: Ի դեպ, շատ կարևոր է, որ *zasg(u)*- անցողիկ բայի այդպիսի գործածությունը Նախիջևանի արձանագրությունում ուրարտական վիմագրության մեջ միակը չէ: Ճիշտ նույն կարգի ակնառու փաստեր տեղ են գտել նաև Մենուայի Անզավուրթեփեում (Վանա լճից հյուսիս) հայտնաբերված երկու իդենտիկ արձանագրություններում, ուր ասված է. *hauni*

^{16RU} Huradinakuni zasguni կամ zasguni ^{LRU} Qutume¹⁶: Ինչպես հստակ երևում է, այստեղ ակնարկ անգամ չկա մարդկանց սպանություն մասին: Ընդհակառակը, Նախիջևանի արձանագրության նման, այստեղ խոսքը մի դեպքում Խուրադինակունի քաղաքի և՛ նվաճման (*hauni*), և՛ zasguni անելու, իսկ մյուս դեպքում՝ Կուտումե քաղաքի սոսկ zasguni անելու մասին է:

Մի խոսքով, բերված տեքստերից հստակ երևում է, որ նրանցում միօրինակ հիշատակվում է երկրների ու բնակատեղիների նվաճման և այնտեղ ձեռնարկված ոչ թե մարգկանց սպանությունների, այլ ինչ-որ ուրիշ կարգի գործողությունների մասին, որն արտահայտված է zasguni բայով: Նյութի մանրադնին ուսումնասիրության ղեպքում այդ հարցի պատասխանը, այլ կերպ ասած, *zasg(u)*- բայիմաստի բացահայտումը Նախիջևանի և Անդավուրթեփեի արձանագրություններում, մեր կարծիքով, բավական ստույգ կարելի է դրնել ուրարտական այլ արձանագրությունների մեզ հետաքրքրող տեքստերի տարբերակներում: Օրինակ, ուրարտական արձանագրություններում հաճախ հիշատակվում է. *E.GAL haubi* ^{KUR} *ebani atubi URU* ^{MEŠ} *amastubi* «... Ամրոցը նվաճեցի, երկիրը ավերեցի, քաղաքները հրկիղեցի»¹⁷: Իսկ որոշ գեպքերում էլ *at(u)*- բային նվաճողական բնույթի տեքստերում փոխարինում են նրա գաղափարագիր համադրներ *KU*-ն կամ *ŠÁ*-ն միևնույն «ավերել» նշանակությամբ:

Հետևաբար, Նախիջևանի և Անդավուրթեփեի արձանագրությունների *zasg(u)*- բայը, անկասկած, նույնական է այլ տեքստերի *at(u)*- ուրարտերեն բային, ինչպես նաև նրա *KU* և *ŠÁ* գաղափարագիր տարբերակներին: Նրանք բոլորն էլ մատնացույց են անում նվաճված երկրների և բնակատեղիների ավերման մասին: Այդ գեպքում, բնականաբար, հարց է ծագում, թե ինչպես, այնուամենայնիվ, համատեղել *zasg(u)*- բայի «սպանել» և «ավերել» իմաստները տարբեր տեքստերում: Կարծում ենք, որ այստեղ հազիվ թե առարկություն ծագի, եթե ասենք, որ երկու դեպքում էլ խոսքը ոչնչացման մասին է (մի գեպքում երկրների կամ բնակատեղիների, իսկ մյուս գեպքում՝ ռազմագերիների): Եվ ամենևին պատահական չէ, որ հենց ճիշտ նույն ձևով է ընկալում *zasg(u)*- բայը Մենուայի Անդավուրթեփեի արձանագրության մեջ նաև Գ. Ա. Մելիքիչվիլին: Միայն թե զարմանք է հարուցում այն փաստը, որ եթե արձանագրության թարգմանության մեջ *zasguni*-ն, որն ուղեկցում է Խուրադինակունի և Կուտումե քաղաքների նվաճմանը, նրա մոտ արտահայտված է «ոչնչացնել» իմաստով, ապա բառարանատիպ անվանացանկում, չգիտես ինչու, կրկին «սպանել» ձևով է մատուցվում¹⁸:

16 K. B a l k a n. Ein urartaischer Tempel auf Anzavurtepe bei Patnos und hier entdeckte Inschriften. — Anatolia, V, Ankara, 1960, արձանագրություն N1, տողեր 21-22, 24=N2, տողեր 18-19, 22-23:

17 УКН, 127, V, տողեր 3-4=HchI, 80, §10 (V, 3-4).

18 ВДН, 1971, N 3, с. 235 – 236; N 4, с. 290.

Ինչ վերաբերում է Նախիջևանի արձանագրության 3-րդ տողի վերջում հայերեն հոդվածում առաջարկված *ku-l[u-ār-sū-ni](?)* ընթերցմանը, ասլա, մնացած հանգամանքները մի կողմ թողած, քննարկվող տեքստի հետ այն չի առնչվում: Ի դեպ, գիտությունը հայտնի է միայն Սարգուրյան տարեգրության մեջ կրկնակի հանդիպող *kuluaršibi* գրելաձևը (YKH, 155F, տող 27): Սակայն ասենք թե, այնուամենայնիվ, ինչ-որ ձևով այդ երկու տեքստերը առնչվում են, այդ դեպքում ևս մեղ հասկանալի չէ հրատարակիչների կողմից ըստական *-ibi* վերջավորության «հարմարեցումը» (այսինքն՝ փոխարինումը *unī-ni*) Նախիջևանի արձանագրության *ḫauni*, *zasguni*, *teruni* բայերի *-unī* վերջավորությանը: Չէ որ զրանցից առաջինը՝ *kuluaršibi*-ն անանցողիկ բայ է¹⁹, իսկ վերջիններս՝ անցողիկ: Ուստի մի՞թե պարզ չէ, որ *kuluaršibi*-ն իր *i* կամ *i(a)* անանցողիկ բայի ցուցիչով *bi* վերջավորությամբ, *ḫauni*, *zasguni* և *teruni* բայերի նման (իրենց *-u-* անցողիկ բայի ցուցիչով և *-ni* վերջավորությամբ) միատեսակ արտահայտված է անցյալ կատարյալ ժամանակի եզակի 3-րդ դեմքով:

Սարգուրյան տարեգրության *zasguni*-ն և *kuluaršibi*-ն առնչվում են տեքստի ընակչության (*LUUKU^{MES}*) ոչնչացման (կոտորածի) և փախուստի հետ, իսկ Նախիջևանի արձանագրության *zasguni*-ն՝ նվաճված երկրների ոչնչացման, ավերման հետ: Եվ դա այն դեպքում, երբ բնակչության փախուստ վերջինում չի հիշատակված, ուստի *kuluaršuni(?)* կամ ավելի ճշգրիտ՝ *kuluaršibi* բայի անտեղի վերականգնումը Նախիջևանի արձանագրության գիտական տառագարձման և «մարդկանց» բռնադատության հավելումը թարգմանության մեջ իրերի վիճակը ամենևին չի փոխում:

Այստեղ մենք, բնականաբար, բացառեցինք *kuluaršibi* անանցողիկ բայի առկայությունը սեպագիր տեքստում, քանի որ այն արձանագրության ընդհանուր բովանդակությանը չէր առնչվում: Խնդիրը բարդանում է մանավանդ այն հանգամանքով, որ սեպագիր տեքստում փոքրիչտե հստակ պահպանվել է այդ բառի սոսկ առաջին վանկը, որը արձանագրության բոլոր հետազոտողները, այդ թվում մենք, միանշանակ ընթերցում ենք *ku*: Ուստի կարծում ենք, որ այդ հարցի լուծմանը գուցե ինչ-որ չափով կարող է նպաստել արձանագրության հաջորդ, 4-րդ տողի սկզբի տեքստը և նրա կապը նախորդ տողի *ku*-ով սկսվող բառի հետ:

Այստեղ ավելորդ ենք համարում անդրադառնալ 4-րդ տողի սկզբում հայերեն հոդվածի հեղինակների կողմից առաջարկված *GI-a-se* անհավանական ընթերցմանը և նրա նույնքան անհավանական նույնացմանը ուրարտերենի *bidūjase* «վերադարձին» բառի հետ: Նկատենք, որ ոչ նրանց ձեռքի տակ եղած արձանագրության լուսանկարի վրա է նման ըն-

19 И. М. Дьяконов. Урартские письма и документы. М. — Л., 1963, с. 56, прим. 49.

թերցում նշմարվում, ոչ այն հանդիպում է ուրարտական արձանագրութ-
յուններում, ոչ էլ համոզիչ է թվում նրա նույնացումը *bidujase*-ի հետ:

Նշենք, որ արձարձվող հարցի կապակցությամբ մեր ուշադրություն-
նր ավելի շուտ սևեռվում է Միրյո Սալվինիի գերմաներեն հոդվածում գե-
տեղված արձանագրության լուսանկարի վրա, ուր իտալացի հեղինակը,
կարծեցյալ *GI-a-se*-ի փոխարեն, իրավամբ ընթերցում է *ma-a-nu*: Այդ
դեպքում, բնականաբար, մենք ստիպված եղանք դիմելու ուրարտական
արձանագրություններում *ku-ni* սկսվող բառացանկին և որոշ գոուշավո-
րություններ հանգեցինք այն մտքին, որ գուցե ենթադրաբար այստեղ արժե
վերականգնել *ku-[ru-ni?]*: Այդ բառով, ինչպես հայտնի է, ուրարտական
արձանագրությունները սովորաբար վկայում են նվաճված ամրոցների ա-
նառիկությունը: Իսկ Ռուսա I-ի Ծովինարի արձանագրության մեջ *kuruni-*
ն ակնարկում է նվաճված երկրների վայրը՝ անառիկ լեռներում:

Հետևաբար, Նախիջևանի արձանագրության սեպագիր տեքստում
ku-[ru-ni?] *ma-a-nu* «անմատչելի է եղել» արտահայտությունը երևի վե-
րաբերում է հենց ժայռին, որի վրա փորագրվել է արձանագրությունը: Դա
ինչ-որ չափով հաստատվում է նաև այն փաստով, որ *kuruni(?) manu*
տեքստին անմիջապես հետևում է *teruni* ^d*Haldiei pulusi* «տեղակայեցի
Խալդի աստծո քարակոթող» արտահայտությունը: Եվ, այնուամենայնիվ,
սա առայժմ մնում է լոկ որպես գիտական հիպոթեզ:

Անդրադառնալով, այնուհետև, արձանագրության վերջին, 5-րդ
տողի սեպագիր տեքստին, զարմանք է պատճառում հայերեն հոդվածի հե-
ղինակների կողմից տողի սկզբին մասնակի վերականգնումներով մատուց-
ված *NIG.GA i-ni-li* ընթերցումը և նրա «գանձերն այս» թարգմանություն-
նը:

Ի գեպ ամենևին հասկանալի չէ, թե այդ կարծեցյալ գանձերի տակ
ինչ է ենթադրվում՝ նվաճված քաղաք-պետությունները, թե՞ ժայռագիր
արձանագրությունը: Մյուս կողմից, գաղափարագրերի հիշյալ կոմբինա-
ցիան համապատասխանում է ակկադերեն լեզվի *makkuru-namkuru*-ին և
նշանակում է ոչ թե «գանձ», այլ «գուլք»²⁰: Է՛լ չենք ասում այն մասին,
որ *ini(li)* «այս» որոշիչն էլ ուրարտերենում սովորաբար դրվում է որոշյալ-
ներից ոչ թե հետո, այլ առաջ՝ *inili KA, ini É, ini É.GAL, ini pulusi, ini pili*
և այլն: Ի գեպ, ասվածով դեռևս լիովին չեն սպառվում առաջարկված ան-
համոզիչ ընթերցումը և թարգմանությունը:

Սեպագիր տեքստը, մյուս կողմից, համառորեն հուշում է, որ այդ
մտացածին դանձերի փոխարեն, արձանագրության 5-րդ տողի սկզբի տու-
ժած հատվածում, ամենայն հավանականությամբ, պետք է եղած լինի ու-
րարտերեն ^{GUD}*pahini* «ցուլ» բառը: Իսկ դա նշանակում է, որ սահմանված
հրամանի (*ardise*) համաձայն, Խալդի գերագույն աստծուն պետք է զոհա-
բերվեր ցուլ, այն դեպքում, երբ հայերեն հոդվածի հեղինակները թյուրի-
մացաբար «ցլիկ» են ենթադրում սեպագիր տեքստի շարունակության

^{GUD}AB-ի՝ «կովի» տակ, կարծելով, թե այն իբր պետք է ղոհաբերվեր իսաղիին (այս մասին, սակայն, մի փոքր հետո): Նշենք նաև, որ ուլի ղոհաբերությունը այստեղ (ցուլի փոխարեն) բացառվում է, քանի որ այդ դեպքում ուրարտական վիճագրերում նրան օրինաչափորեն ուղեկցում է ոչ թե Նախիջևանի արձանագրության *urbulini* «ղոհաբերել», այլ *nipsidulini* «մորթել» բայը:

Կրկին անդրազանալով 5-րդ տողի սկզբի տեքստին, նախ նշենք, որ Միրյո Սալվինիի այստեղ ենթադրաբար ընթերցած *ardise* «հրաման» բառը պահպանված սեպագիրը նշանների հետքերով չի հիմնավորվում: Ուստի կարծում ենք, որ այդ հարցում իրավացի են հայերեն հոգվածի հեղինակները, երբ այն վերականգնում են 4-րդ տողի վերջում: Ինչ վերաբերում է 5-րդ տողի սկզբին, ապա այստեղ կարծես պահպանվել են GUD դետերմինատիվի և *pa* վանկի հետքերը, այսինքն՝ ^{GUD}*paħini* «ցուլ» բառի սկիզբը: Ի դեպ, գիտական տառադարձման մեջ Մ. Սալվինիի GUD-ը մասնակիորեն վերականգնում է տուժած հատվածի վերջում, իսկ տեքստի թարգմանության մեջ գրանից առաջ ավելացնում է նաև «ոչխար»: Բոլոր դեպքերում իտալացի ուրարտագետը միանգամայն ճիշտ ուղու վրա է կանգնած, երբ ցուլի (նաև ոչխարի) ղոհաբերություն է առաջարկում գեղադույն աստված իսաղիի համար: Ըստ որում այստեղ տուժած սեպագիր տեքստը հնարավորություն է ընձեռում ^{GUD}*paħini*-ից հետո վերականգնել նաև ^{UDU}*šuse* «ոչխար», որի վերջին *se* նշանի հետքերը կարծես պահպանվել են եղծված հատվածի վերջում: Միայն թե դժվար է համաձայնվել Մ. Սալվինիի հետ, երբ նա «ոչխար» բառը արձանագրության գիտական տառադարձման մեջ վերականգնում է «ցուլ»-ից առաջ: Դա հակասում է ուրարտացիների ղոհաբերության ստույգ կանոններին:

Արձանագրության 5-րդ տողի տեքստի մեկնարանության մեջ, այնուհետև, տարակուսանք է հարուցում հայերեն հոգվածի հեղինակների առաջարկած «ցլիկ» թարգմանությունը (կովի փոխարեն)՝ ^{UDU}AB-ի համար: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք կովի ղոհաբերությունը թյուրիմացաբար կապել են իսաղիի հետ, այն դեպքում, եբ ուրարտացիները այդ կենդանին ղոհաբերել են սոսկ դիցուհիներին՝ իսաղիի կին Վարուբանիից սկսած: Ըստ ամենայնի հայտնի է, որ արական սեռի աստվածների, այդ թվում իսաղիի, համար բնութագրող է բացառապես ուլերի, ցուլերի և ոչխարների ղոհաբերությունը²¹: Բայց մի՞թե կովի կամայական փոխարինումը ցլիկով կարող է փոխել իրերի վիճակը:

Այդ հարցի պատասխանը, առաջին հերթին, հստակ երևում է Միրյո Սալվինիի և մեր կողմից 5-րդ տողի սկզբում ցուլի (^{GUD}*paħini*) և ոչխարի (^{UDU}*šuse*) վերականգնումից: Հենց այդ կենդանիների ղոհաբերությունն էլ նախատեսված է եղել Նախիջևանի արձանագրության մեջ իսաղիի համար: Ինչ վերաբերում է ^{GUD}AB-ին, այսինքն՝ կովին, ապա, ինչպես քիչ հետո կհամոզվենք, այլ նպատակի է ծառայել այն:

21 YKH, 25, տողեր 4-5, 9-10, 27, տողեր 3-4, 30, 65, տողեր 25-26 և այլն:

Այժմ հակիրճ հայերեն հոդված սպրդած մի այլ կոպիտ սխալի մասին, որը ճշգրտել է Միրյո Սալվինին: Այսպես, 5-րդ տողի վերջում հայերեն հոդվածի հեղինակները ընթերցել են ^aHal-di-e EN.MAH-e և թարգմանել «Խալդի տիրոջը բարձրյալ»: Եվ ստացվել է այնպես, որ Խալդիին մի դեպքում զոհարելու են մտացածին «գանձեր», իսկ մյուս դեպքում՝ նույնքան մտացածին «կով» ցլիկի կերպարանքով: Եվ դա այն դեպքում, երբ կովի զոհաբերությունը նախատեսված է եղել ոչ թե Խալդիի, այլ նրա կնոջ՝ Վարուրանիի համար:

Երևի այստեղ կարիք կա անդրադառնալու այն հարցին, թե ինչպես է, այնուամենայնիվ, տեղի ունեցել թյուրիմացությունը և ինչ ձևով է բացահայտվել այն: Հայերեն հոդվածի հեղինակները սեպագիր տեքստի si վանկազիր նշանը շփոթել են հեռավոր նմանություն ունեցող EN «տեր» գաղափարադրի, իսկ la նշանը՝ նրանից նկատելի տարբերվող MAH-ի հետ: Եվ այդպիսով ուրարտերեն si-la-e «կին»²² բառը թյուրիմացաբար դարձել է EN.MAH-e: Տեքստում, հավանաբար, տուժած է silae-ի SAL «կին» դետերմինատիվը: Նշենք, որ այս ամենը արձանագրության համեմատաբար հաջող լուսանկարի վրա վարպետորեն բացահայտել է Միրյո Սալվինին: Հետևաբար, արձանագրության 5-րդ տողի տեքստը կստանա այսպիսի տեսք. ^{GUD}ru-[hi-ni ^{UDU}si-š]e ^aHal-di-e ur-bu-li-ni ^{GUD}AB ^aHal-di [SAL?]si-la-e ^{KUI}P[si-lu-a-di] «Ցուլ (և) ոչխար Խալդի աստծուն թող զոհաբերվի, կով Խալդիի կնոջը Պուլուազի երկրում»: Այստեղ արժե նաև նշել, որ սա ^{AL}silae «կին», «դուստր» բառի սոսկ երկրորդ հիշատակությունն է ուրարտական սեպագրերում ընդհանրապես: Եվ շատ ավելի կարևոր է, որ սա ցնցող նորույթ է, միակ դեպքը, երբ Խալդի աստծո կնոջը զոհ է մատուցվում առանց անունը հիշատակելու: Մնացած բոլոր հայտնի դեպքերում աներկրա նշվում է պարզապես անունը՝ ^aArubani կամ ^aUarubani:

Այստեղ արդեն ավելորդ ենք համարում քննարկելու Նախիջևանի արձանագրության մեջ հայերեն հոդվածի հեղինակների կողմից Արծինի, Արծիկումե (ավելի շուտ Արծիկուա), Պուլուազի տեղանունների դիտարկումը որպես խոսուն անուններ՝ կազմված հնդեվրոպական նախալեզվի բառարմատներով, մանավանդ որ նրանցից առաջին երկուսը եղծված են սեպագիր տեքստում: Կարծում ենք, որ դա ապարդյուն աշխատանք է, քանի որ տվյալ դեպքում մենք գործ ունենք բազմաթիվ անհայտներով հավասարման հետ՝ ի՞նչու են դրանք անպայման խոսուն անուններ, ի՞նչու են ամեն դեպքում ծագում հենց բնիկ հայերեն բառապաշարից, արդյո՞ք ուրարտական արձանագրություններում հիշատակված և Հայկական լեռնաշխարհին վերաբերող բոլոր տեղանունները արժե մեկնաբանել, մեղմ ասած, այդպիսի կասկածելի սկզբունքով և այլն: Մի խոսքով, մեր հաստատ համոզմամբ, դա որևէ հետաքրքրություն չի ներկայացնում ո՛չ ուրարտագիտության, ո՛չ էլ հայագիտության համար: Ուստի ավելի լավ է անդրադառնանք Նախիջևանի նոր արձանագրության կենտրոնական հարցին՝ Պուլուազի երկրի տեղադրմանը: Եվ չնայած այդ երկիրը վաղուց հայտնի

է դիտութեանը երկու սեպագիր աղբյուրներէց, սակայն այս նոր արձանագրութիւնը հաճելի անակնկալներ է մատուցում նրա տեղադրումը նորովի մեկնաբանելու համար:

Այստեղ նշենք, որ ակնանավոր ուրարտագետ Միրյո Սալվինին հստակ պատկերացում ունի Ուրարտուի՝ ընդհանրապէս և Պուլուադի լայնատարած երկրի սլատմութեան մասին՝ մասնավորապէս: Դա, ըստ ամենայնի, երևում է նաև Նախիջևանի նոր արձանագրութեանը նվիրված նրա արժեքավոր հոդվածից: Ուստի ընթերցողին հիշեցնենք, որ Պուլուադի տեղանվան կեղծ ստուգարանութեան, առկա սեպագիր աղբյուրների միտումնավոր անտեսման և այլ կարգի հարցերի մասին ստորև բերվող դիտողութիւնները վերաբերում են սոսկ հայերեն հոդվածի հեղինակներին:

Եվ այսպէս, առնվազն գարմանք են հարուցում, առաջին հերթին, Պուլուադի երկրանվան ստուգաբանութեանը հարմարեցված դատողութիւնները: Դրանք ծայր աստիճանի արտառոց կարող են թվալ ուրարտական վիմագրութեանը փոքրիշատե ծանոթ յուրաքանչյուր հետազոտողի: Հոդվածի հեղինակների կարծիքով, օրինակ, Պուլուադին կամ Բուլուադին ոչ թե երկիր է, այլ նշանակում է «Բուլուա լեռան վրա» (խոսքը իբր սեպագիր արձանագրութեան մասին է), այդ անվան մեջ *-(a)di-*ն իբր վերջածանց է «վրա» իմաստով, այդ տեղանունը իբր նույնական է Օձասարի դիմաց ընկած Բոլու լեռնանվան հետ և, վերջապէս, այդ Բուլու-Պուլուս իբր առնչվում է հայերենի «պալ» (քարաժայռ) արմատի հետ, որն ունի հնդեվրոպական ծագում:

Այժմ անդրադառնանք վերոհիշյալ, թող ներվի ասել, հայտարարութիւններին, քանի որ նրանք հեռու են մեկնաբանութիւն լինելուց: Տպավորութիւն է ստացվում, թե իրենց մտացածին եղրահանգումներին ուղի հարթելու համար հրատարակիչները մասսայական ընթերցողից միտումնավոր թաքցրել են այդ երկրի մասին վաղուց ի վեր հայտնի հավաստի տվյալները: Այլապէս ինչով կարելի է բացատրել Սարգուրի II-ի տարեգրութեան և նույն թագավորի Աեկենդելի արձանագրութեան հարուստ փաստական նյութի նկատմամբ եղած քար լռութիւնը: Մի՞թե Պուլուադի պատմութիւնը սկսվում և ավարտվում է սոսկ Նախիջևանի պակասավոր արձանագրութեան, ճիշտ է չափազանց արժեքավոր, բայց բավական սուղ և կցկտուր տվյալներով:

Աւրդուրյան տարեգրութեան մեջ, օրինակ, ասված է. «Այստեղ արչավեցի՝ Պուլուադի երկիրը: Եկավ իմ առջև ղորքը, ետ մղեցի (այն), հետապնդեցի մինչև Լիբլիունի քաղաքը: Լիբլիունին, արքայանիստ քաղաքը, ամրացված էր, մարտում նվաճեցի: Արձանագրութիւնն այստեղ տեղակայեցի, քաղաքները հրկիղեցի, երկիրը ավերեցի, տղամարդկանց (ու) կանանց այստեղից քշեցի, ամրոցներ այստեղ կառուցեցի, երկիրը իմ երկրին միացրեցի»²³:

Պատկերացնում եք, թե այստեղ որքան հարուստ փաստեր կան Նախիջևանի արձանագրութեան հրատարակիչների կարծիքը Պուլուադի լեռնանուն լինելու մասին հիմնավորապէս հերքելու համար: Մի՞թե լեռը,

23 M. T s e r e t h e l i. Die neuen haldischen Inschriften König Sardurs von Urartu. Heidelberg, 1928, S. 16–17 (E, 8–18).

ինքնին վերցրած, կարող էր ռազմական արշավանքի օբյեկտ լինել, ունենալ զորք, ամրացված արքայանիստ քաղաք, հրկիզված և ավերված այլ քաղաքներ, որոնցից Ուրարտու են քշվել տղամարդ ու կին ռազմագերիներ: Մյուս կողմից այստեղ, ինչպես ասում են, սևով սպիտակի վրա կրկնակի հիշատակված է, որ Պուլուադին իսկապես երկիր է՝ ^{սս}ebani, իսկ եթե լեռ լիներ, ապա կհամարվեր ^{SAD}babani: Եթե դրան էլ ավելացնենք, որ արշավանքը ձեռնարկվում է դեպի Պուլուադի՝ ^{սս}Puluadi-edi (այստեղ այդ տեղանունը արտահայտված է ուղևորական -edi հոլովածևով), ապա մի՞թե այս փաստը ևս չի վկայում, որ Պուլուադին կատարյալ ամբողջությամբ է, ուստի չի կարելի կամայականորեն մասնատել այն, մանավանդ, որ ուրարտերենը երբեք -adi մտացածին վերջածանց չունի՝ «վրա» նշանակությամբ: Ի դեպ, ուրարտական բազմաթիվ ժայռագիր արձանագրություններ են հայտնի դիտությունը, նրանցից ո՞րի մասին է, Բոլուի նման, նշված, թե իբր այս կամ այն լեռան վրա է փորագրված:

Նույնքան կարևոր և հարուստ փաստեր է պարունակում Պուլուադիի մասին Սարգուրի II-ի Սեկենդելի դարձյալ ժայռագիր արձանագրությունը²⁴, որը նույնպես միտումնավոր անտեսվել է Նախիջևանի արձանագրության հայերեն հրատարակիչների կողմից: Ի դեպ, Պուլուադի-Բոլուանհարկի նույնացման համար դեռևս չարիքի փոքրագույն է Սարգուրյան տարեգրության անտեսումը, քանի որ նրա հիման վրա հնարավոր չէ տալ Պուլուադիի տեղորոշումը: Ինչ վերաբերում է Սեկենդելի արձանագրությանը, ապա նրանում հիշատակված Պուլուադին արդեն անլուծելի ինդիքներ է դնում հրատարակիչների առջև, եթե նկատի ունենանք, որ Նախիջևանի Բոլու լեռը գտնվում է Սեկենդելից հսկայական հեռավորության վրա: Իսկ ի՞նչ է ասում, այնուամենայնիվ, Սեկենդելի այդ հեռավոր արձանագրությունը. Սարգուրին Պուլուադիում նվաճել է 21 ամրոց և 55 քաղաք: Բացի այդ, այս արձանագրությունը ևս, Սարգուրյան տարեգրության նման, հավաստում է այդ երկրի արքայանիստ քաղաք Լիբլիունին մարտերում դրավելու մասին²⁵:

Այսպիսով, բերված փաստական նյութից հստակ երևում է, որ ի դեմս Պուլուադիի մենք գործ ունենք բավական լայնատարած երկրի հետ, քանի որ նրա նվաճման մասին պատմող Նախիջևանի և Սեկենդելի ժայռագիր արձանագրությունները գտնվում են միմյանցից ավելի քան հարյուր կմ հեռավորության վրա: Երևի պատահական չէ, որ այդ ընդարձակ տարածքում ուրարտական սեպագիր աղբյուրները աշխարհագրական այլ միավորներ չեն հիշատակում: Դա լիովին հաստատվում է նաև Սարգուրյան տարեգրության, Սեկենդելի և Նախիջևանի արձանագրությունների մատուցած ամփոփիչ տվյալներով: Այսպես, Սարգուրյան տարեգրությունը վկայում է, որ ուրարտացիները Պուլուադիում հրկիզել ու ավերել են

24 Այս արձանագրությունը գտնվում է Հյուսիս-արևմտյան Իրանում, Սեկենդել բնակատեղիի մոտ, Վարժազան-Վարզական վարչական կենտրոնից 5 կմ արևելք, իսկ Ախարից՝ Հյուսիս-արևելք:

25 М. С а л ь в и н и. Уточнения в чтениях двух урартских надписей в Иранском Азербайджане. — Древний Восток и мировая культура, М., 1981, с. 72—73.

բազմաթիվ քաղաքներ, ինչպես նաև կառուցել նոր ամրոցներ. Սեկենդելի արձանագրության համաձայն այնտեղ նվաճվել են ավելի քան երկու տասնյակ ամրոց և Հինգուկես տասնյակ քաղաք, իսկ Նախիջևանի սեպագիրը հիշատակում է, որ Պուլուազի երկրի կազմում եղել է թվով չորս քաղաք-պետություն:

Սեպագիր աղբյուրների փաստական նյութը, մյուս կողմից, վկայում է Պուլուազի լայնատարած երկրի ռազմական հզորության մասին: Ակներև է, որ Իչպուլինիի և Մենուայի համատեղ կառավարման օրոք նրա չորս քաղաք-պետությունների, այսպես կոչված, նվաճումից հետո, բավական երկար ժամանակ, այսինքն՝ Մենուայի և Արգիշտի I-ի միանձնյա թագավորման օրոք, ինչպես նաև Սարգուրի II-ի գահակալման սկզբնական տարիներին, Պուլուազին ուրարտական հզոր իշխողների ասպատակության առարկա չի դարձել: Կարծում ենք, որ բոլորովին էլ պատահական չէ, որ Նախիջևանի արձանագրության մեջ ակնարկ անգամ չկա Պուլուազիից Ուրարտու քշված ռազմագերիների, կողոպտված ավարի, այդ երկիրը հարկատու դարձնելու կամ նրա տերիտորիան Ուրարտուին կցելու մասին: Ուստի դժվար է դա «նվաճում» անվանել: Այդ տեսակետից միանգամայն ակներև են հետագայում Սարգուրի II-ի տարեգրության տվյալները, երբ ռազմական արշավանքի արդյունքները ամփոփվել են Պուլուազիից ռազմագերի տղամարդիկ ու կանայք քշելով, այդ երկրում նոր ամրոցներ կառուցելով և նրա լայնատարած տերիտորիան Ուրարտուի զբաղեցրած վիթխարի տարածքին կցելով:

Նախիջևանի ուրարտական արձանագրության փաստական նյութի հիման վրա Պուլուազի երկրի տեղադրման վերանայումը միաժամանակ նոր լույս է սփռում Արաքսից Հյուսիս ուրարտական թագավորների ձեռնարկած նվաճումների վրա՝ այդ պետության դոյուլթյան սկզբնական դարաշրջանում: Մինչև վերջերս Հայտնի էր, որ Իչպուլինիի և Մենուայի համատեղ գահակալման օրոք ուրարտացիները ձեռնարկել են Արաքսի անցումը այդ գետի սոսկ վերին հոսանքում, Ալաշկերտից Հյուսիս՝ Հասնելով ընդհուպ մինչև Կատարգա երկիրը (պատմական Կղարջք):

Ինչ վերաբերում է Հիշյալ ասարածքից արևելք ընկած շրջաններին, ապա ուրարտական սեպագիր աղբյուրները նախկինում վկայում էին, որ Արաքսի անցումը ձախափնյա հատված հաջողվել է ձեռնարկել սոսկ Արարատյան դաշտավայրում, այն էլ Իչպուլինիի թոռանը և Մենուայի որդուն՝ Արգիշտի I-ին: Իսկ այժմ Նախիջևանի նոր արձանագրության տվյալներով արդեն պարզվում է, որ դեռևս Իչպուլինիի և Մենուայի համատեղ գահակալման օրոք ուրարտացիները իրենց արշավանքներից մեկի ընթացքում անցել են Արաքսի հանդիպակաց՝ ձախ ափը Արարատյան դաշտավայրից շատ ավելի հարավ-արևելք, այժմյան Իրանի Հյուսիս-արևմտյան սահմանի վրա, Զուլֆա քաղաքի մոտակայքում:

Նախիջևանի նոր արձանագրությունը, կարծես, հիմք է տալիս նաև մի այլ եզրահանգման: Դա կապված է Երևանի նորագավիթ արվարձա-

նում հայտնաբերված պաշտամունքային արձանագրության բեկորի հետ⁶, որը և՛ ասորեստանյան գրելաձևով, և՛ բովանդակությամբ զգալի ընդհանրություններ ունի Մենուայի YKH, 96 արձանագրության հետ: Հետևաբար, եթե մեր այդ ենթադրությունը, այսինքն՝ Նորագավթի սեպագիր բեկորի պատկանելությունը Մենուային հաստատվի, ապա Արարատյան դաշտավայրում ուրարտացիների կողմից Արաքսի ձախափնյա հատված մուտք գործելու պատիվը պետք է վերագրել ոչ թե Արգիշտի I-ին, ինչպես առայժմ ընդունված է մասնագիտական գրականության մեջ, այլ նրա հորը՝ Մենուային:

Հոգավածի վերջում նպատակահարմար ենք գտնում վերոհիշյալ ամբողջ շարադրանքի հիման վրա առաջարկելու Նախիջևանի սեպագիր նոր արձանագրության ճշգրտված ընթերցումը և թարգմանությունը.

1. ^dHal-di-ni-ni us-ma-[si-ni] ^mIs-pu-ü-i-ni-se ^{md}XV-duri-hi-[ni-se]
2. ^mMe-nu-a-se ^mIs-pu-ü-[i]-ni-hi-ni-se ^{URU}Ar-s[i-n]i [KUJR-ni ha-ü-ni²⁷ ^{URU}Iš(?)-[…KUR-ni]
3. ^{URU}Ar-si-q[u]?-a-i KUR-ni ^{URU}A-a-ni-a-ni KUR-ni-e ha-ü-ni za-as-gu-ni ku-[ru-ni?]
4. ma-a-nu te-ru-ni²⁷ ^dHal-di-e-i pu-lu-si ^{KUR}Pu-lu-ü-a-di te-ru-ni²⁷ a[r-di-se]
5. ^[GUD]p[a-hi-ni ^{UDU}sü-š]e? ^dHal-di-e ur-bu-li-ni ^{GUD}AB ^dHal-di ^[SAL?]si-la-e ^{KUR}p[u-lu-a-di]

(1) Խալդայան հզորությունը Իչպուինին, Սարգուրիի որդին, (և) (2) Մենուան, Իչպուինիի որդին, Արծինի քաղաքի երկիրը գրավեց(ին), Իչ[... քաղաքի երկիրը], (3) Արծիկուա քաղաքի երկիրը, Այանիանի քաղաքի երկիրը գրավեց(ին), ոչնչացր(ին)²⁸:

Բարձր(ը) է (4) եղել²⁹ (գիրքը), անդակայեց(ին) Խալդի աստծո քարակոթող Պուլուազի երկրում, սահմանեց(ին) հրաման. (5) ցուլ (և) ոչխար Խալդի աստծուն թող ղոհաբերվի, կով՝ Խալդիի կնոջը³⁰ Պուլուազի երկրում:

26 Ա. Խ. Փիլիպոսյան. Նորագյուտ ուրարտական հուշարձան Երևանում. Հայկական ՍՍՀ-ում 1985-1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան (գեկուցման թեզեր), Երևան, 1987, էջ 35-37:

27 Սեպագիր տեքստում, ուրարտական գրագրի մեղքով, բոլոր բայերը (ստորագյույնները) փորագրված են եզակի թվով՝ հոգնակի ենթակայի (Իչպուինիի և Մենուայի) առկայության դեպքում:

28 Կարգա՝ ավերեց(ին):

29 Եթե kuruni «բարձր» բառի վերականգնումը ինչ-որ չափով արգարացում ունի, ապա տվյալ դեպքում գուցե ակնարկվում է արձանագրության բարձր տեղում փորագրելու փաստը, մանավանդ որ տեքստում դրան անմիջապես հետևում է հենց քարակոթողի (pulusi) տեղակայման հիշատակությունը:

30 Միակ բացառությունը ուրարտական սեպագրում ընդհանրապես, երբ ղոհաբերությունը նախատեսվում է Վարուբանիի համար՝ առանց անունը հիշատակելու:

НОВЫЕ ЧТЕНИЯ И ИНТЕРПРЕТАЦИИ В НАХИЧЕВАНСКОЙ
КЛИНОПИСИ

НИКОЛАЙ АРУТЮНЯН

Резюме

В статье предложен ряд новых чтений и интерпретаций в Нахичеванской клинообразной надписи, на основании которых автор приходит к следующим основным выводам:

1. Нахичеванская надпись составлена в ранний период истории Урарту, в конце IX в. до н.э. и повествует о военном походе урартских царей Ишпуини и Менуа в страну Пулуади при совместном их правлении.

2. После успешного завершения похода, когда были завоеваны и разорены четыре города-государства – составные части упомянутой страны, урартскими царями там были проведены культовые обряды – жертвоприношения быков и овец в честь урартского верховного бога Халди и коров в честь верховной богини Уарубани – супруги Халди.

3. Вместо прежде установленной сравнительно ограниченной ее территории в районе Секеңдела и на сопредельной территории в Иране, ныне уже выясняется обширность территориальных пределов страны Пулуади, протяженностью свыше ста километров, начиная с района Джульфы в Нахичеване вплоть до района Ахара и сопредельной территории в северо-западном Иране, к западу от Каспийского моря.

4. На основании новых чтений и интерпретаций в статье приведен также уточненный перевод Нахичеванской надписи.

NEW READINGS AND INTERPRETATIONS IN THE INSCRIPTION FROM
NAKHIJEVAN

NIKOLAY HAROUTYUNYAN

S u m m a r y

The paper deals with some new readings and interpretations in the Urartian cuneiform inscription from Nakhijevan, which lead author to the next conclusions:

1) The Nakhijevan inscription was composed during the early Urartian history, towards the end of the IX century B. C. and is dealing with the campaign of the kings Ishpuini and Menua to Puluadi in the course of their joint rule.

2) After the successful campaign, when four city-states of the abovementioned country were captured and devastated, the Urartian kings conducted there cultic rites - sacrifices of oxes and sheeps to the god Haldi, and cows - to his female counterpart Uarubani.

3) Previously Puluadi was sought in the limited area in the Iranian region of Sekendel. Now it becomes clear that Puluadi should be localized in the vast area between Julfa in Nakhijevan up to Ahar and surrounding regions in north-western Iran, to the west of the Caspian Sea (nearly one hundred kilometers).

4) The paper offers also the revised complete translation of the Nakhijevan inscription.